հետ 'ի դատախազական թիւնս միշտ հարկաւորեալս յապայս բարեկիրթ որդւոց մայրութեանց իւրեանց՝ զարգացեալք յուղղափառութեան կրօնս ըստ սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի՝ յերևելոց 'ի Ջանից և հրկոլութեանց Հոգաբարձուհեաց և Ուսուցչաց նոցին, որք այն անպատեալ 'ի խուռն հանդիսի հարցաքննութեան բոլորաշուրթն շնորհակալութեամբ օրհնեցին զտուրբ կեանս հասարակաց Օնեղիդ, յեցեալ և յուսացեալ յամենաքաղցր ակնարկութիւն Զերբդ Վեհափառութեան՝ յայտարար հանդիսանալով առ ամենեսեան մեծի Հոգւոյ՝ թէ զերախտաւորական բանս 'ի Պոնդակի Հայրապետական օրհնութեան, և թէ զգրատուր օժանդակութիւնս յարդեանց Թեմական մեծ դպրոցի քաղաքիս։

Աշակերտք թեմական դպրոցիս ըստ որում բաց 'ի պատրաստականէն բաժանին յերկուս՝ Առաջին և Երկրորդ դասատուներս որպէս միջին կարգի ուսումնարան, արժան վարկաց ըստ ցուցման թերթի հարցաքննութեան նոցա յիւրաքանչիւր առարկային 'ի տեղեկութիւն Վեհափառութեան Զերոյ պատկերացուցանել 'ի նեղքոյ։

Իսկ յաշակերտաց պատրաստական դասարանի որոց թիւն հասանի ցվեթասուն և վեց, են ոմանք որք 'ի սկզբանց Հայ և Ռուս լեզուաց լուսագոյնք են, ոմանք միջակ, և այլք տկարք ըստ երևելոյ փորձութեան ընթերցանութեանց նոցա։

Վեհափառ Տէր, եթէ ընդարձակեսցին հետ զհետէ դրամական միջոցք այսոցիկ դպրոցաց 'ի մերոց Ազգակցաց յօժարակամ դրամատուս օժանդակութեամբ, որպէս արդէն սեռանի 'ի յոյս լուսաւոր դարուս սկզբնաւորեալ յառաջադիմութեան — լիապատար շնորհիւ անքուն հսկողի Վեհափառութեան Զերոյ, հաւատամ է, թէ ունին 'ի սուղ ժամանակի ոչ սակաւ արդիւնս պաղաբերել Հայ որդիք կրկին սեռի 'ի պայծառութիւն Սրբոյ Եկեղեցւոյ և 'ի լուսութիւն ներկայ փառաց ազգի իւրեանց. որոյ ամենից բարեկարգութեանց և արդիւնաւոր յառաջադիմն զարգացմանց սակս՝ և ես ըստ խոնարհանն կարողութեան 'ի Տիրական մեծ խնամս Զերդ Վեհափառութեան յուսացեալ՝ փութամ գասանել զվայելուչ ընթացս առաւել քան զոր ունին զարդիս 'ի հարկէ սրբազան պաշտամանց իմոց,

Մնալով ամենախոնարհ հրամանակատար Մեծի Հայրապետութեան Զերոյ

Փոխանորդ Թեմին Երևանայ

Մեսրոպ Վարդապետ Սմբատեանց։

Հմր. 485.

Ի 20-ն Յունիսի 1869 ամի.

ՅԵՐԵՒԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ

Պարարաղու Կոնսիստորիայն Հայոց՝ վաղուց 'ի վեր մեծաքանակ դրամական կորուստ նշմարելով 'Նուխի քաղաքի երկուց Եկեղեցեաց մէջ՝ հին և նոր երեցփոխանաց մեթ և խառն հաշուակալութենէն, քանիցս անգամ սահմանած էր Հոգևոր Պատասխանատուութիւնն 'Նուխեաց՝ հետամուտ լինել, գտնել այս կորուստը։ Հոգևոր Պատասխանատուութիւնը՝ առարկայի փնտռութեան նայելով, որոյ վրայ հարկաւոր էր երկար միջոցներ ծախել, նոյն Կոնսիստորիայի թոյլատրութեամբ՝ կոչեց տեղւոյս փոխանորդ Հայր Երիստակէս վարդապետի նախագահութեամբ յերկոտասան անձանց յանձնաժողով, ուր թէ յաշխարհականաց, Աղնիւ Պետրէ Կամսարական, Յարութիւն-բէկ Մուրատեանց, Գրիգոր-բէկ Մելիք Ազամալեանց, Աղէքսանդր բէկ Մակեդոնսկի, Դաւիթ բէկ-Սարգսեանց, պարոն Աստուածատուր Շահբազեանց, պարոն Յակոբ վարդապետեանց և պարոն Յակոբ Կարապետեան Ենաղչեանց, և ինքն

քըն 'ի Հոգևորականաց, բարեկարգիչ Նուխի քաղաքի՝ Երիտասարդաց Կիւրեղ քահանայ Մելքոնեանց, Առաքել քահանայ Տէր Յովհաննիսեան Կոտոշեանց, Պուկաս քահանայ Օհան Պարգսպեան և Մկրտիչ քահանայ Մելիք-Պարգսպարեանց։ Այլ որովհետև Յանձնաժողովոյ նիստը պիտի կաղմուի 'ի 10 օգոստոս ամսոյ, ուստի կ'մնայ մեզ գործողութիւնը և որպէս վարձան առնելու վրայ գրել գինի աւարտման։

Այս կորուստի գիւտը արգարև մեծ ուրախութիւն ունի պատճառել մեր Նուխւոյ սիրելի ազգայնոց, և մեծամեծ լաւութեան պատուղներ յապագայն պիտի ընծայէ նոցա խնամակալաց վիճակին։ Յուսով եմք թէ՝ ազգասէր Անդամք յանձնաժողովոյն, ճշմարիտ և անկողմնասէր հոգւով յառաջ կ'վարեն այս ազգային սրբազան պարտաւորութիւնը, միշտ և հանապազ՝ որ սիրելին է ամենեցուն, Ազգի և Եկեղեցւոյ օգուտը մտածելով։

Գ. Էրզրում-մանեան։

ի 26 Յուլիսի 1869 ամի։

է Ք. Նուխի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ

Նոր-Նուխի քաղաքի տակաւին, բայց բարենախանձ Հայրապետի հասարակութեան մէջէն քանի մի անձինք ազգասիրական հոգւով փառուած ուզելով նիւթապէս ապահովացուցանել իրենց ժողովրդական դպրոցի գոյութիւնը, 1863 թուոյն հաներ էին հինգ հինգ ռուբլի արծաթիւ, որով այն ատեն կաղմուեր էր ինն հինգ ռուբլի գումար, և այս գումարը համակամ հաճութեամբ յանձներ էին պատուելի Երեցփոխանի Եկեղեցւոյն տեղւոյս՝ վարձառական Ազգայ Մկրտիչ Խաչատրեանի, որ նա ըստ իւրաքանչիւր նեղութեան բաժանել, բարեկոյս անձանց վերայ տոկոսեօք շահեցողութեան համար։ Եւ այս կերպով որոշած են այն գումարը բանեցնել իրենց մէջ մինչև տասը տարի, և անկէց ետքը հաւաքուած դրամագլուխը Տէրութեան դրամատուներէն մէկը դնել, որպէս զի անոր շահովը անապատաք պահպանուի ժողովրդական դպրոցը տեղւոյս։ Այս ազդօրուտ և գեղեցիկ խորհրդոյն համար տեղւոյս Հայապետի հասարակութիւնը 1864 թուոյն ընդուներ է օրհնութեան և շնորհակալութեան նամակ վիճակիս նախկին Տեղակալ—Առաջնորդ Գաբրիել վարդապետէն (այժմ եպիսկոպոս) Էյվազեան։

Այժմ, այս պանծալի ձեռնարկութիւնը տեղւոյս Հայապետի հասարակութեան, վերին տեսչութեան նախախնամութեամբը կոխեց նաև վեցերորդ տարւոյն մէջ զարմանալի յաջողութեամբ։ Որպա այսպիսի յառաջադիմութեան պատճառներէն մէկն ալ այս է որ այն անձինքը՝ որոց որ յիշեալ Պատ. Խաչատրեանց Երեցփոխանի ձեռքով յանձնուած է կտոր կտոր այս դրամագլուխը 'ի շահեցողութիւն, մինչև քսան տոկոսիք ռուբլիէն երկու անգամ 'ի տարին տուեր են, անոր համար յիշեալ իննսուն ռուբլի դրամագլուխը մօտ՝ վեցամեայ ընթացիք հասեր է այժմ ցհազար երեք հարիւր ռուբլիս արծաթոյ։

Ուստի տարակոյս չկայ որ մինչև այս որոշուած տասը տարի ժամանակը լրանալուն ալ իրենց գովելի առաջադրութիւնը պիտի յառաջ տանեն աւելի սիրով՝ կրկնապատկելով առ այս իրենց եռանդը։ Եւ այն մէկ կամ երկու անձինքը իրենց մէջէն, որք տարիներուն անցաջողութեան պատճառաւ՝ սառն կերպով կ'նայէին այս նախանձելի գործոյն վերայ, նոքա ևս գործոյն այսպիսի բերկրաւէտ յառաջադիմութենէն հոգեորուած՝ ընդհանուր գործակցութեամբ աշխատեն ըստ կարելւոյն ձեռնտու և օգնա-